

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇՐԱՖՅԱՆ ՆԵԼԼԻ ԱՐՄԵՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ)

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական
իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ–2021

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АШРАФЯН НЕЛЛИ АРМЕНОВНА

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ
УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ (НА ОСНОВАНИИ ПРИМИРЕНИЯ С
ПОТЕРПЕВШИМ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.05 – «Уголовное право и криминология, уголовно-
исполнительное право»

ЕРЕВАН–2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ա. Դիբանդյան**


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ա. Թամազյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու **Գ.Ա. Ալոյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի փետրվարի
18-ին՝ ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան,
Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի հունվարի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու,  **Տ.Ա. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН
РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор
С.А. Дилбандян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор
А.А. Тамазян
кандидат юридических наук
Г.А. Алоян

Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 18 февраля 2021 года в 16:00 часов на заседании
специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-
Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123). С диссертацией
можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-
Армянского университета.

Автореферат разослан 8 января 2021 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук

 **Д.А. Айрапетян**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ցանկացած օրենսդրության որակի չափորոշիչներից մեկը դրա համապատասխանությունն է մարդասիրության սկզբունքին: Այդ չափորոշիչը կիրառվում է նաև քրեական օրենսդրության որակը բնորոշելու ժամանակ: Այն պետք է լինի մարդակենտրոն, ուղղված լինի մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը: Այն պետք է ստեղծի պայմաններ, որոնք անհրաժեշտ են նրա լիարժեք զարգացումն ապահովելու համար: Նշյալ պահանջները սահմանված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերով, որոնցից կարևորագույնը 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է: Թեպետ բուն հռչակագրում մարդասիրության սկզբունքը ձևակերպված չէ, սակայն դրա և՛ անվանումը, և՛ դրանում ներառված նորմերը թույլ են տալիս սահմանել, որ մարդասիրությունը ստանդարտների մի ամբողջ համակարգ է, որոնք ուղղված են մարդու կյանքի առավելագույնս բարենպաստ պայմաններ ստեղծելուն՝ անկախ նրա անհատական յուրահատկություններից (ռասայից, ազգությունից, սոցիալական կամ գույքային դրությունից և այլն):

Քրեական օրենսդրությունը, չնայած իր պատմականորեն որոշարկված պատժիչ բնույթին, նույնպես պետք է համապատասխանի մարդասիրության սկզբունքի պահանջին: Սրանով է պայմանավորվում դրա զարգացման հիմնական ուղղությունը աշխարհի բազմաթիվ պետություններում: Այդ նպատակով որոնվում են ազդեցության ձևեր, որոնք չպարունակեն կամ նվազագույն չափով պարունակեն մարդկանց իրավունքների ու ազատությունների խախտումների տարրեր, անգամ եթե այդ մարդիկ կատարել են հանցագործություններ: Տիրապետող է դառնում այն գաղափարը, որ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձն ինքը պետք է գիտակցի իր մեղավորությունը, զղջա դրա համար և ամբողջովին հատուցի իր պատճառած վնասը: Այսինքն՝ հարկադրական ներգործությանը փոխարինելու պետք է գա կատարված հանցագործությամբ պատճառված վնասը ինքնակամորեն հատուցելը: Նման ձևերից մեկը տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելն է:

Տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի մարդասիրական ներուժի էությունն այն է, որ դրա հիմքում ընկած է հանցագործություն կատարած անձին հանրօգուտ գործողությունների մղելը խրախուսելու մեթոդի կիրառումը: Պետությունը ձգտում է խթանել կոնկրետ մեղավոր անձին կատարելու գործողություններ՝ ուղղված հանցագործությամբ պատճառված վնասը հարթելուն: Այս մեթոդի օգնությամբ պետությունը, հասարակությունը ձգտում են երկխոսություն հաստատել

հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի հետ, որն ուղղված է կոնկրետ հանցագործության կատարման հետևանքով ծագած վեճը հարթելուն:

Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը մասամբ համապատասխանում է հաշտարարության ինստիտուտին, որը ներկայումս ներդրվում է մի շարք երկրների քրեական դատավարության պրակտիկայում: Այս ինստիտուտների միջև ընդհանուրն այն է, որ դրանց համար առանցքային է հաշտեցումը: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը արդիական է համաշխարհային քրեական և քրեադատավարական օրենսդրության զարգացման ներկա փուլում:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը մշտապես զգալի ուշադրության է արժանացել: Դա պայմանավորված է քրեական օրենսդրության գործնական կիրառման ժամանակ դրա պահանջվածությամբ: Դրա գրավչությունը պրակտիկայում թույլ է տալիս ոչ միայն ներդնել մարդասիրությունը իրավակիրառման մեջ, այլև առաջ է բերում բազմաթիվ հարցեր, որոնց ձգտում են պատասխանել համապատասխան գիտական հրապարակումները: Այսպես, վերոնշյալ հիմնախնդրի քննությանն են նվիրված հետևյալ գիտնականների աշխատությունները՝ Օ.Ա. Վլադիմիրովա, Է.Լ. Սիդորենկո, Ս.Ա. Սինենկո, Վ.Ս. Խարլամով, Յա.Մ. Միտեևա, Դ.Վ. Լոպաշենկո, Ն.Է. Մարտինենկո, Վ.Վ. Օստանինա, Ն.Վ. Շեդրին և այլք: Բացի այդ, հիմնախնդրի վերաբերյալ ատենախոսություններ են պատրաստել և պաշտպանել հետևյալ հեղինակները՝ Գ.Մ. Յակոբաշվիլի (Մոսկվա, 2002), Ե. Ա. Սիմոնովա (Սարատով, 2002), Վ.Լ. Գորիչևա (Ռյազան, 2004), Գ.Ս. Դոսևա (Դոնի Ռոստով, 2004), Ռ.Կ. Պլիսկո (Վլադիվոստոկ, 2009), Վ.Վ. Ցենյովա (Կեմերով, 2002), Օ.Ա. Վլադիմիրովա (Սամարա, 2015), Ա. Վ. Աբրահամյան (Երևան, 2012), Հ.Ա. Հարությունյան (2014): Սակայն, չնայած զգալի թվով աշխատանքների առկայությանը, որոնցում փորձ է արված քննարկել կողմերի հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հիմնախնդիրը՝ հաշվի առնելով վերջին շրջանում քրեական քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի պահանջները, անհրաժեշտություն է առաջացել նորովի տեսականորեն իմաստավորելու այդ ինստիտուտը և դրա հետ կապված խնդիրները:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են քրեական պատասխանատվությունից ազատելիս, մասնավորապես տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան միջազգային իրավական

նորմերն են, ՀՀ Սահմանադրությունը, քրեական օրենսդրությունը, քրեադատավարական օրենսդրությունը, իրավունքի այլ ճյուղերը, որոնց վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի առանձնահատկությունները և դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Սույն ատենախոսության նպատակը տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համալիր հետազոտությունն է քրեական օրենսդրության հումանիզացման և խրախուսման մեթոդի կիրառման հնարավորություններն ընդլայնելու համատեքստում՝ որպես հարաբերությունների քրեական-իրավական կարգավորման համար ավանդական իմպերատիվ մեթոդի այլընտրանք: Հետազոտության համալիր բնույթը թույլ է տվել քննել նաև մի շարք այլ հարցեր, որոնց պատասխանները ստանալը հնարավոր է դարձրել հասկանալու դիտարկվող ինստիտուտը՝ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը:

Վերոնշյալ նպատակը թույլ է տվել լուծել հետևյալ խնդիրները.

- վերլուծել հաշտեցման ինստիտուտը արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում,

- հետազոտել խրախուսման յուրահատկությունները քրեական իրավունքում,

- վերլուծել դրական վարքագծի քրեաիրավական խթանման առանձնահատկությունները,

- բացահայտել խրախուսման՝ որպես դրական խթանի տեսական հիմքերը,

- քննել քրեաիրավական խրախուսական նորմերը և դրանցում կողմերի հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը,

- վեր հանել հաշտության հասկացության առանձնահատկությունները քրեական իրավունքում,

- պարզել տուժողի հետ հաշտության իրավական բնույթը և տուժողի հետ հաշտության տեղը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի մեջ,

- բացահայտել տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները,

- **Հետազոտության մեթոդաբանական հիմքը** դիալեկտիկական մատերիալիզմն է, որը թույլ է տվել քննել ստեղծված քրեաիրավական իրականությունը դրա զարգացման դիալեկտիկայի և արդի հասարակության այլ իրողությունների հետ փոխկապվածության մեջ: Բացի այդ, օգտագործվել են մասնավոր գիտական մեթոդներ՝ համեմատական վերլուծության, համակարգային վերլուծության,

համեմատական-իրավական, դատական պրակտիկայի ընդհանրացման: Կիրառվել է նաև տրամաբանական մեթոդների համալիր՝ վերլուծության, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի:

Հետազոտության տեսական հենքը կազմել են հետևյալ հետազոտողների գիտական աշխատությունները՝ Ա. Հ. Գաբուզյանի, Ա. Մարգարյանի, Ա. Վ. Աբրահամյանի, Ս. Ա. Դիլբանդյանի, Գ. Ն. Բորզենկով, Ա. Է. Ժելինսկի, Ի. Յա. Կոզաչենկո, Գ. Ա. Կրիզեր, Լ. Լ. Կրուզիկով, Վ. Ն. Կուդրյավցև, Ն. Ֆ. Կուզնեցովա, Ն. Ա. Լոպաշենկո, Ա. Վ. Նաումով, Ա. Ա. Պրոնտկովսկի, Ա. Ի. Ռաբոզ, Վ. Դ. Սպասովիչ, Ն. Ս. Տազանցև, Ա. Ն. Տրայնին, Ի. Յա. Ֆոյնիցկի, Ա. Ի. Չուչևա, Մ. Դ. Շարգորոսկի:

Ատենախոսության **գիտական նորույթը** այն է, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը դիտարկվել է որպես քրեաիրավական հարաբերությունների կարգավորման հումանիզացման՝ ժամանակակից քրեական իրավունքի համար համընդհանուր միտման դրսևորում: Դրա հիման վրա ձևավորվել է հայեցակարգ, որը թույլ է տվել համակարգայնորեն դիտարկել նշյալ ինստիտուտը՝ վեր հանելով դրա էության բնութագիրը: Ընդ որում, նշյալ հայեցակարգը հիմնավորում է, որ անհրաժեշտ է դիտարկել քրեական իրավունքի տվյալ ինստիտուտը որպես խրախուսման մեթոդի դրսևորումներից մեկը, որը թույլ է տալիս երաշխավորել ոչ միայն տուժողի և հանցագործություն կատարելու մեջ մեղավորի իրավունքներն ու ազատությունները, այլև կանխում է նոր հանցագործություններ կատարելը: Տվյալ հայեցակարգի ձևակերպումն ունակ է դառնալու նշյալ ինստիտուտի կիրառման մեթոդիկայի հիմքը քրեական իրավունքի կիրառման պրակտիկայում:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրական փոփոխություններին վերաբերող առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով, քրեաիրավական կարգավորման այնպիսի մեթոդի իրականացման ձևերից է, ինչպիսին խրախուսումն է: Այս առումով քրեական իրավունքի տվյալ ինստիտուտն ուղղված է այն բանին, որ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձը գիտակցի իր գործողությունների հանրային վտանգավորությունը, զղջա կատարածի համար և հատուցի պատճառած վնասը: Սրանից ելնելով՝ նպատակահարմար է նշյալ նորմում կատարել հետևյալ լրացումը. «*Հաշտեցումը պետք է լինի կամավոր՝ հիմնված հանցանք գործած անձի կողմից իր մեղքը գիտակցելու վրա*»: Դա թույլ կտա կանխել տուժողին, հակառակ իր կամքի, հաշտվելու հարկադրելու հնարավորությունը,

առանց հանցանք գործած անձի կողմից իր մեղքը գիտակցելու:

2. Իրավական խրախուսումը ներառում է երկու տարր. համապատասխան արարքի կամ վարքագծի սոցիալական հավանությունը և սոցիալապես նշանակալի գործողություններ կատարելու որոշակի իրավիճակում հայտնված անձանց սոցիալական խթանումը: Իրավական խթանումը տեղ է գտել քրեական օրենսդրությունում, թեև չի կարելի ասել, որ այդ միջոցներով է պայմանավորված ամբողջ քրեական օրենքը: Այդուհանդերձ, դրանց առկայությունը հնարավորություն է ընձեռում քրեական օրենսդրությանը լինելու բավականաչափ արդյունավետ առանձին սոցիալական խնդիրներ լուծելիս: Ընդ որում, հարկ է նշել, որ իրավական խրախուսման հասկացությունն ինքնին քրեական օրենսդրությունում չի կիրառվում: Քրեական օրենսդրությունում խրախուսումն ունի տարբեր ձևեր, որոնք կախված են պետության ու հասարակության համար նշանակալի, լուծման կարոտ խնդիրների առանձնահատկություններից: Այդ ձևերից մեկը քրեական պատասխանատվությունից ազատելն է: Խրախուսում-նորմեր են լուրջ << քր.օր.-ի 72-րդ և 73-րդ հոդվածներում պարունակվող այն նորմերը, որոնք նախատեսում են քրեական պատասխանատվությունից ազատում, քանի որ դրանք կոչված են խթանելու հանցանք գործած անձանց հանրորեն ակնկալվող վարքագիծը: Այդ պատճառով նշյալ նորմերի կիրառումը պետք է լինի պետության քրեական քաղաքականության մի մասը, որը պետք է արտացոլվի << վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում՝ որպես նոր հանցագործությունների կանխարգելման միջոց: Նախաքննության մարմինները և դատարանները պետք է ավելի հաճախակի կիրառեն նշյալ նորմերը, քանի որ դրանով կկանխարգելեն նոր հանցագործությունները:

3. Իրավական խրախուսման կարևորագույն տարրերից է իրավական խթանումը՝ որպես մարդու վրա ներգործության հատուկ ձև, որով նա կանգնում է հնարավոր գործողությունների տարբերակներից մեկի ընտրության առաջ, երբ այդ մարդը ավելի մեծ հավանականությամբ կընտրի այն գործողությունները, որոնք արժանանում են պետության հավանությանը, քանի որ այդ դեպքում օրենքը նախատեսում է տրամադրել որոշակի բարիք: Ընդ որում, խթանը, որը դրդում է մարդուն գործել այնպես, ինչպես անհրաժեշտ է հասարակությանն ու պետությանը, կարող է արտահայտվել ամենատարբեր բարիքներով: Դա կարող է լինել քրեական պատասխանատվությունից ազատելը կամ քրեական պատիժը մեղմելը: Այս առումով նպատակահարմար ենք գտնում << քր.օր.-ի 62 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «...և այլ գործողությունները, որոնք վկայում են հանցավոր անձի զղջալու մասին»:

4. Քրեաիրավական խրախուսումը իրավական ներգործության բավականաչափ արդյունավետ մեթոդ է, որը կիրառվում է այն անձանց հանրօգուտ վարքագիծը

խթանելու համար, որոնք հայտնվել են քրեական օրենքի գործողության տիրույթում: Տվյալ մեթոդը հիմնված է օրենքի այն սահմանումների վրա, որոնցով նախատեսվում է որոշակի բարիքներ տրամադրել այն անձանց, որոնք կատարում են հանրօգուտ գործողություններ որոշակի իրադրություններում: Որպես խրախուսում հանդես եկող բարիքներից է որոշակի խստություններից ազատելը: Այդպիսի խստություններից է քրեական պատասխանատվությունն առհասարակ և քրեական պատժի տարբեր տեսակները՝ որպես քրեական պատասխանատվության իրացման ձևեր: Այս առումով խրախուսման նորմերի թվարկումը չպետք է սահմանափակվի միայն ՀՀ քր.օր.-ի 72 և 73 հոդվածներով: Այդ ցանկը պետք է համալրեն նաև այն նորմերը, որոնք նախատեսում են քրեական պատժի մեղմում: Մասնավորապես, դրանց մեկը պետք է լինի այն նորմը, որը նախատեսի մեղմել միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար սահմանված պատիժը տուժողի հետ հաշտվելու դեպքում:

5. Խրախուսում-նորմի առանձնահատկություններից է այն, որ նա ունի քառակազմ կառուցվածք, քանի որ թեև դրանում առկա չէ նշում որոշակի գործողություններ չկատարելու բացասական հետևանքների մասին կամ, հակառակը, նշում որոշակի գործողություններ կատարելու մասին, սակայն դա ենթադրվում է խրախուսում-նորմերի և արգելանք-նորմերի միջև զուգահյուսյալ կապի առկայությունից հաշվի առնելով, որոնցում նախատեսվում են որոշակի բացասական հետևանքներ: Այն, որ խրախուսում-նորմերում սանկցիաների մասին անմիջական նշումները բացակայում են, դեռ չի նշանակում, որ դրանք գոյություն չունեն, քանի որ ակնհայտ է, որ եթե ակնկալվող վարքագիծը չապահովվի, ապա այդ սանկցիաներն անպայման գործի կդրվեն: Դրանով նշյալ նորմերը տարբերվում են մյուսներից: Դրանք ունեն փոքր-ինչ այլ, ավելի բարդ կառուցվածք: Նման առանձնահատկությամբ օժտված է նաև ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածը, որով նախատեսվում է ազատել քրեական պատասխանատվությունից՝ հաշվի առնելով տուժողի հետ հաշտվելը: Այսպես, այստեղ ուղղակիորեն նշվում է այդ բարիքը, որն էլ հենց խրախուսումն է՝ քրեական պատասխանատվությունից ազատելը: Տվյալ բարիքը խրախուսանք է տուժողի հետ հաշտվելուն ուղղված վարքագծի համար: Սակայն պակաս ակներև չէ նաև այն, որ եթե համապատասխան անձը չկատարի նշյալ նորմի դիսպոզիցիայում նշված գործողությունները, ապա դա կհանգեցնի նրա նկատմամբ անբարենպաստ հետևանքների՝ կապված քրեական պատասխանատվության և քրեական պատժի հետ: Այսինքն՝ միանգամայն ակնհայտ է, որ նշյալ քրեաիրավական նորմի կառուցվածքում առկա է թե՛ խրախուսումը, թե՛ սանկցիաները: Հիպոթեզում նաև արտահայտվում է խրախուսում-նորմերի առանձնահատկությունը: Մասնավորապես, նշյալ նորմի հիպոթեզում նշվում է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել

խրախուսումը: Այսինքն՝ դա անձն է, որն առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն: Դա տվյալ դեպքում հիպոթեզ է, որը սահմանում է այն անձանց, որոնք նկատմամբ կարող է կիրառվել խրախուսումը: Հաշվի առնելով ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածի վերոնշյալ առանձնահատկությունը՝ անհրաժեշտ ենք համարում լրացնել այն հետևյալ բառերով. «Այն դեպքում, երբ հնարավոր չէ հասնել հաշտության, չնայած հանցանք գործած անձի ձեռնարկած բոլոր գործողություններին, նա կրում է քրեական պատասխանատվությունն ամբողջ ծավալով՝ համաձայն սույն օրենսգրքի»: Այդ դեպքում ուղղակիորեն կկիրառվի սանկցիան՝ որպես անձի համար անբարենպաստ հետևանք, որը չի կարողացել պատշաճ կերպով իրականացնել իրենից հանրորեն ակնկալվող գործողությունները:

6. Հաշտեցումը միջոլորտային ինստիտուտ է, որը նշանակություն ունի քրեական և քրեադատավարական իրավունքի համար: Տվյալ ինստիտուտի շրջանակներում ձևավորվում է յուրատեսակ, առանձնահատուկ հարաբերությունների մի ամբողջ համակարգ: Ընդ որում, հաշտեցումը կարևոր է քրեական իրավունքի և քրեական դատավարության համար՝ որպես վեճի երկու կողմերի միջև արդեն ձեռք բերված արդյունք, որը կարող է դրվել քրեական պատասխանատվությունից ազատելու մասին համապատասխան որոշում ընդունելու հիմքում: Հաշտեցումը՝ որպես միջոլորտային ինստիտուտ, չի սահմանափակվում միայն քրեական պատասխանատվությունից ազատելով ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Տվյալ ինստիտուտը լիովին համապատասխանում է արդի պահանջներին, որոնք առաջադրում է հասարակությունը քրեական արդարադատությանը: Այս առումով, ճիշտ կլինի, ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածում նշել, որ տուժողի հետ հաշտությունը պետք է ձեռք բերվի հաշտարարության ընթացակարգերի հիման վրա, ինչպես նաև լուծել հաշտարարության մասին համապատասխան օրենք ընդունելու հարցը, որը կներառի հանցանք գործելու մեջ մեղավոր անձանց և կատարված հանցագործությունից տուժած անձանց միջև հաշտությունը:

7. Հաշտեցումը հիմնված է կողմերի կամավորության վրա, որոնք ձգտում են հասնել դրան, և հանցանք գործած անձի նախաձեռնողականության վրա: Հանցագործություն կատարած անձի նախաձեռնողականությունը երաշխավորում է նրա ուղղվելը և հետագայում նոր հանցանքներ գործելուց զերծ մնալը:

Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթը ենթադրում է, որ իրագործվում է պատժի նպատակը առանց պատիժը կիրառելու: Ընդ որում, պետությունը ձեռք է բերում ոչ միայն իրեն ցանկալի արդարադատության արդյունք, այլև էական տնտեսական արդյունք, այսինքն՝ խնայվում են միջոցներ, որոնք այլ պարագայում պետք է ուղղվեին պատժի իրականացումն ապահովելուն: Այդ առումով նպատակահարմար կլինի ՀՀ քր.օր.-ի

73-րդ հոդվածում ներառել դրույթ այն մասին, որ հաշտեցման վերոնշյալ ընթացակարգի նպատակը սոցիալական արդարությունը վերականգնելն ու դաստիարակչական արդյունքի հասնելն է համապատասխան հանցագործությունը կատարած անձի առնչությամբ:

8. Հաշտեցման ընթացակարգը միշտ անհատական է: Այս առումով պետք է ճիշտ համարել այն, որ ո՛չ ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածում և ո՛չ էլ այլ տեղում չի տրվում գործողությունների ցանկը, որոնք կարող են և պետք է հանգեցնեն հաշտության: Սակայն հատուկ պետք է նշել այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի նշյալ ընթացակարգը՝ կամավորությունը, գիտակցվածությունը, փոխադարձությունը, թույլատրելիությունը, պարտադիրությունը: Այս առումով ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածը պետք է լրացնել հետևյալով. «Հաշտեցման ընթացակարգը պետք է հիմնված լինի կամավորության, գիտակցվածության, փոխադարձության վրա: Այն պետք է իրականացվի գործող օրենսդրությանը համապատասխան, իսկ դրա արդյունքները պետք է պարտադիր լինեն հաշտության կողմերի, ինչպես նաև մյուս բոլոր անձանց համար»:

9. Այլ պետությունների քրեական օրենսդրության զարգացման միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը ունի մեծ ներուժ, քանի որ առավելագույն չափով է համապատասխանում մարդասիրության պատկերացումներին, որոնք արտացոլված են միջազգային հիմնական փաստաթղթերում (1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և այլն): Բոլոր երկրների օրենսդրությունները, որոնք օգտագործում են այդ ինստիտուտը, դրա հիմնական նշանակությունը համարում են հանցագործություն կատարած անձանց շրջանում հանրօգուտ վարքագիծ խթանելը:

10. Հաշվի առնելով քրեական օրենսդրության հումանիզացման համաշխարհային միտումները, ինչպես նաև տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կանխարգելիչ ներուժը՝ հարց է բարձրացվել ընդլայնելու այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ այդ ինստիտուտը կարող է կիրառվել: Այսպես, թերևս անհրաժեշտ է կիրառել այն ոչ միայն ոչ մեծ ծանրության հանցանք գործած անձանց նկատմամբ, այլև միջին ծանրության հանցանք գործած անձանց նկատմամբ: Դա թույլ կտա ընդլայնել խրախուսման մեթոդի գործողության շրջանակը՝ որպես մեթոդի, որն ապացուցել է իր արդյունավետությունը կատարված հանցագործությունների հետևանքով ծագած վեճերը լուծելիս: Սրանից ելնելով՝ ՀՀ քր.օր.-ի 73-րդ հոդվածում պետք է նշել, որ այս նորմը կիրառվում է ոչ միայն ոչ մեծ ծանրության հանցանք գործած անձանց, այլև

միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց նկատմամբ: Հետևաբար վերոնշյալ նորմը պետք է սկսվի հետևյալ բառերով. «Ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը...»:

11. Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է նորմատիվորեն սահմանել տուժողի հետ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի հաշտեցման կարգը: Դա թույլ կտա խուսափել նշյալ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի հնարավոր խախտումներից՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ փոխզիջում գտնելու համար, ինչը կդառնա համապատասխան հանցագործության կատարումից հետո առաջացած վեճի արդարացի լուծում: Այդ նպատակով անհրաժեշտ է ընդունել առանձին օրենք, որը կկանոնակարգի հաշտեցման գործընթացը քրեական պատասխանատվությունից ազատելու հարցերը կարգավորելիս: Այդ օրենքը պետք է սահմանի հաշտեցման կարգը, որը պետք է բացառի հանագործությունից տուժած անձին նոր վնաս հասցնելու հնարավորությունը:

Հետազոտության փորձառնական հենքը կազմում են քրեական գործերով դատական պրակտիկայի հրապարակված նյութերի հետազոտման, վերլուծման և ընդհանրացման արդյունքում ստացված տվյալները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի բազմաթիվ դատական ակտեր:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն առենախոսական աշխատանքում ներկայացված է հայեցակարգ, որը թույլ կտա դիտարկել տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը քրեական իրավունքի հումանիզացման գործընթացի դիտանկյունից: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել նշյալ ինստիտուտին կամ քրեական իրավունքում խրախուսման մեթոդին առնչվող այլ հետազոտություններ կատարելու համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ մշակված դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության նորմերի կատարելագործման համար, ինչպես նաև տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հասկացության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային որոշումներ ընդունելիս:

Հետազոտության արդյունքների հավաստիության աստիճանը մեծապես պայմանավորված է աշխատանքի մեթոդաբանական, իրավական, տեսական և փորձառնական հիմքերը բնութագրող բաժինների բովանդակությամբ: Բացի այդ՝ պայմանավորված է նաև այն փորձառնական հենքով, որի հիման վրա կատարվել են առենախոսական հետազոտության եզրակացությունները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգայի և իրավունքի ինստիտուտում, որտեղ քննարկվել է ու երաշխավորվել պաշտպանության:

Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ներկայացվել են ատենախոսի կողմից պատրաստված գիտական զեկույցներում և գիտական հաղորդումներում:

Հետազոտության արդյունքները կիրառվում են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգայի և իրավունքի ինստիտուտում քրեական իրավունքի դասընթացում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության օբյեկտով, նպատակով և խնդիրներով: Այն կազմված է ներածությունից, երեք գլխից՝ ներառյալ ինը պարագրաֆներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը, դրա գիտական մշակվածության աստիճանը, սահմանված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ, տեսական ու փորձառնական հենքը, արված է հետևություն հետազոտության գիտական նորոյթի, դրա տեսական և գործնական նշանակության վերաբերյալ, ձևակերպված են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները, ինչպես նաև բերված են տվյալներ դրա փորձարկման արդյունքների մասին:

Գլուխ 1. «Հրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական հարցադրումները և օրենսդրական զարգացումը»: Այն կազմված է երկու ենթագլուխներից և նվիրված է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման պատմատեսական զարգացման հիմնախնդիրներին և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում ի բնութագրական գծերին:

1.1 ենթագլխում՝ «Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման պատմատեսական զարգացման հիմնախնդիրները», ներկայացվում է տուժողի հետ խաշտվելու հիմքով օրենսդրության պատմական զարգացումը:

1.2. ենթագլխում՝ «Հաշտեցման ինստիտուտը արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում», ներկայացվում է տուժողի հետ հաշտվելու վերաբերյալ արտասահմանյան պետությունների օրենսդրական փորձը:

Գլուխ 2. «Հրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի խրախուսական բնույթը»: Այն կազմված է չորս ենթագլուխներից և նվիրված է խրախուսման՝ որպես քրեաիրավական կարգավորման մեթոդի վերլուծությանը, որի

դրսևորումներից մեկը տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելն է:

2.1. *Ենթազխում՝ «Խրախուսումը քրեական իրավունքում»*, համալիր վերլուծության է ենթարկվում այն, թե ինչ հասկանալ խրախուսում ասելով և քրեական իրավունքի որ ինստիտուտներում է այն դրսևորվում: Ընդ որում. ուշադրությունը կենտրոնացվում է քրեական իրավունքում խրախուսման էությունական կողմի վրա, ըստ որի՝ խրախուսումը պետության կողմից հարկադրանք կիրառելուց հրաժարվելն է, երբ շեշտը դրվում է հանցագործություն կատարած անձի՝ իր մեղավորությունը գիտակցելու և գղջալու վրա, ինչը ենթադրում է պատճառված վնասի հատուցում: Ընդգծվում է խրախուսման սոցիալական նշանակությունը, քանի որ խրախուսման մի մասը կազմող հավանության գնահատականը չափանիշ է, որի օգնությամբ որոշվում է կոնկրետ մարդու համապատասխան վարքագծի սոցիալական արժեքը: Խրախուսման միջոցով պետությունը հավանություն է տալիս կատարված գործողություններին:

2.2. *Ենթազխում՝ «Դրական վարքագծի քրեաիրավական խթանումը»*, տրվում է խրախուսման՝ որպես սոցիալական խթանման դրսևորման վերլուծությունը, որի միջոցով պետությունը ձգտում է այնպիսի պայմաններ ստեղծել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի համար, երբ միակ ողջամիտ վարքագիծը կլինեն հանրօգուտ գործողությունները: Խթանումը թույլ է տալիս հասնել բավականին բարդ սոցիալական խնդիրների լուծմանը առանց հարկադրանքի միջոցներ կիրառելու, քաղաքացիների կամովի ցանկությամբ: Իրավական խթանման հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն օրենքի տեսք է ստանում: Դա ստեղծում է միանգամայն որոշակի երաշխիքներ, որոնք ուժեղացնում են խթանման արդյունավետությունը: Երաշխիքներից զատ՝ իրավական խթանումն օժտված է այնպիսի հատկությամբ, ինչպիսին որոշակիությունն է: Օրենքի նորմում համապատասխան խթանի ամրագրումը ցրում է համապատասխան անձանց կասկածներն առ այն, որ պահանջվող գործողությունները կատարելը կհանգեցնի իրենց համար միանգամայն որոշակի բարիքներ ստանալուն:

2.3. *Ենթազխում՝ «Խրախուսման՝ որպես դրական խթանի տեսական հիմքերը»*, խրախուսումը դիտարկվում է որպես դրական խթան: Այս թեգը հիմնված է այն բանի վրա, որ խրախուսումը մարդու վրա ներգործության միջոցներից է, որպեսզի դրդի նրան գործելու սահմանված օրենքի շրջանակներում, որը ստացել է պետության ու հասարակության հավանությունը: Քրեական իրավունքում խրախուսումը միտված է արդարադատություն իրականացնելու, հանցագործությամբ խախտված արդարությունը վերականգնելու (այս կանոնից բացառություն է հանցագործություն կատարելուց կամովի հրաժարվելը) համար պայմաններ ստեղծելուն: Այն ուղղված է անձի վարքագծին կատարված հանցագործությունից հետո: Պետությունն ու հասարակությունը, չնայած այն բանին, որ համապատասխան անձը հանցանք է գործել, շահագրգռված են այն հարցում, որ հետագայում նա հետևի գործող օրենսդրությանը (այդ թվում և քրեական օրենքին)՝ կատարելով իր վրա դրված պարտականությունները: Ուստի խրախուսումը օգտակար վարքագծի խթանման ձևերից մեկն է:

2.4. *Ենթազխում՝ «Քրեաիրավական խրախուսական նորմերը և դրանցում տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու*

ինստիտուտի ամրագրումը», հետազոտվում են քրեական իրավունքի նորմերը՝ դրանց միջոցով խրախուսման մեթոդը իրականացնելու կտրվածքով: Ընդ որում, առանձնակի ուշադրություն է հատկացվում այն նորմերին, որոնցում ամրագրված է տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը:

Արձանագրվում է, որ խրախուսման նորմերի առանձնահատկությունն այն է, որ դրանք կառավարման նորմեր են, քանի որ դրանց օգնությամբ պետությունը ձգտում է կառավարել համապատասխան անձանց վարքագիծը: Առավել հաճախ պետությունը ձգտում է այդ նորմերի օգնությամբ ներգործել հետքրեական վարքագծի վրա:

Նշվում է, որ, լինելով քառակազմ, ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի նորմի կառուցվածքը պարունակում է ոչ միայն դիսպոզիցիա, խրախուսում և սանկցիան, այլև հիպոտեզ: Հիպոթեզում նաև արտահայտվում է հիպոտեզ-նորմերի յուրահատկությունը: Մասնավորապես, նշյալ նորմի հիպոթեզում նշված է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել խրախուսումը: Այսինքն՝ դա այն անձն է, որն առաջին անգամ է կատարել ոչ մեծ ծանրության հանցագործություն: Դա տվյալ դեպքում հիպոթեզ է, որը սահմանում է այն անձանց, որոնց նկատմամբ կարող է կիրառվել խրախուսումը: Այսինքն՝ միանգամայն ակնհայտ է, որ ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի նորմը պարունակում է նաև այնպիսի տարր, ինչպիսին հիպոթեզն է:

Գլուխ 3-ը՝ Տուժողի հետ հաշտվելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու էությունը և նշանակությունը, բաղկացած է չորս ենթադրույթներից: Այս գլխում ատենախոսը քննության է առնում և զարգացնում տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցակարգը:

«Հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում», ներկայացվում է հաշտեցման՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի կանոնակարգման օրենսդրական և տեսական մանրակրկիտ վերլուծությունը: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը հաճախ դիտվում է որպես հաշտարարության (մեդիացիայի) ձևերից մեկը: Իրոք, այստեղ առկա են որոշ հատկանիշներ, որոնք հատուկ են վեճերի ու կոնֆլիկտների կարգավորման նշյալ տեխնոլոգիային: Դրանց շարքում է կամավորությունը, քանի որ համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ մեղավորը ինքնուրույն, առանց հարկադրանքի է լուծում իր կատարած հանցանքից տուժածի հետ հաշտվելու անհրաժեշտության մասին հարցը: Դրա համար նա նախաձեռնում է մի շարք գործողություններ, որպեսզի տուժողը ցանկանա իր հետ հաշտվել:

Չնայած մոտ լինելուն և նույնիսկ որոշ նմանություններին, չի կարելի ասել, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը նույն բանն է, ինչ ենթադրում է հաշտարարությունը: Այստեղ առկա են նաև որոշ տարբերություններ: Այսպես, հաշտարարության ընթացակարգեր իրականացնելու համար անհրաժեշտ է չեզոք և անաչառ հաշտարար: Քրեական օրենսդրությունը չի պարունակում որևէ պահանջ հաշտարարի ներկայության վերաբերյալ, ինչը ենթադրում է փոխզիջումների փնտրտուքի հնարավորություն նաև առանց նրա: Քրեական օրենսդրության համար կարևորը նպատակին հասնելն է՝ տուժողի հետ հաշտվելը:

Այսպես, ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածում որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք նշված է միայն տուժողի հետ հաշտվելը: Այստեղ դրան հասնելու ընթացակարգի մասին որևէ պարզաբանում չկա: Դրանից հետևում է, որ օրենսդրության համար կարևոր է հաշտության հասնելու բուն փաստը, այլ ոչ թե ընթացակարգը, որի օգնությամբ ձեռք է բերվել այդ արդյունքը:

3.2. ենթազվխում՝ «Տուժողի հետ հաշտության իրավական բնույթը: Տուժողի հետ հաշտության փեղը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի շարքում», քննարկվում են տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի էությունն ու բովանդակությունը: ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի նորմը կառուցված է այն ձևով, որ հաշտեցումը քրեական պատասխանատվությունից ազատելու միակ հիմքը չէ: Բացի այդ, որպես հիմքեր են նշվում նաև վնասը հատուցելը կամ պատճառած վնասը այլ կերպ հարթելը և որպես պայման, որ կատարված հանցագործությունը լինի ոչ մեծ ծանրության: Թվարկված պայմանն ու հիմքերը նույնպես պայմանավորում են քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթն ու հաշտեցման տեսակը, որը պետք է ձեռք բերվի կոնֆլիկտի կողմերի միջև: Ինչ վերաբերում է պայմանին, ապա դրա էությունն այն է, որ բնակչությունը ոչ մեծ ծանրության հանցագործությունները հաճախ ընկալում է որպես կենցաղային կոնֆլիկտ, որը պետք է լուծվի կենցաղային միջոցներով, այսինքն՝ հենց կոնֆլիկտի կողմերի ջանքերով: Այստեղ հաշտեցումը բավականին ներդաշնակ տեսք ունի իբրև կոնֆլիկտի սովորական կարգավորում, որը ծագել է որոշակի հանգամանքների բերումով: Հարկ է նշել, որ վերոնշյալ բոլոր երեք հիմքերի առկայությունը բնավ չի հանգեցնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտավորության: Այդ հնարավորությունը այդպես էլ կարող է մնալ չիրացված: Դա հետևում է նշյալ նորմում օգտագործված ձևից. «... կարող է ազատվել»: Այսինքն՝ նա կարող է ազատվել, կարող է և չազատվել: Դա կարող է որոշել համապատասխան իրավասու, օրենքով սահմանված պաշտոնական անձը կամ մարմինը:

Հաշտեցումը հիմնված է կողմերի կամավորության վրա, որոնք ձգտում են հասնել դրան և հանցագործություն կատարած անձի նախաձեռնողականության վրա: Հանցագործություն կատարած անձի նախաձեռնողականությունը երաշխավորում է նրա ուղղվելը և հետագայում նոր հանցանքներ գործելուց զերծ մնալը: Դրա երաշխիքը նաև կամավորությունն է: Տուժողի հետ հաշտվելիս քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթը ենթադրում է հասնել պատժի նպատակներին առանց այդ պատիժը կիրառելու: Ընդ որում, պետությունը ձեռք է բերում ոչ միայն իրեն ցանկալի արդարադատության արդյունք, այլև էական տնտեսական արդյունք, այսինքն՝ խնայվում են միջոցներ, որոնք այլ պարագայում պետք է ուղղվեին պատժի իրականացումն ապահովելուն:

3.3. ենթազվխում՝ «Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները», քննարկվում են հիմնախնդրին առնչվող հարցեր՝ կապված տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հետ:

Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը ընդունված է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուր հիմքերը այն հիմքերն են, որոնք կիրառվում են քրեական պատասխանատվությունից ազատելու բոլոր ձևերի դեպքում:

Հատուկ հիմքերը միանգամայն որոշակի հանգամանքներն են, որոնց առկայությունը թույլ է տալիս ազատել հանցանք գործած անձին քրեական պատասխանատվությունից: Այսպես, ինչպես վերը նշվել է, համաձայն ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի, քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքեր են՝ հաշտեցումը, պատճառված վնասը հատուցելը կամ վնասն այլ կերպ հարթելը: Միայն այդ հիմքերի առկայությունն է, ըստ ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի, թույլ տալիս բարձրացնել քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը: Այսինքն՝ հատուկ հիմքերը այն հիմքերն են, որոնք թվարկված են քրեական օրենքի համապատասխան նորմում, որոնց առկայությունը թույլ է տալիս լուծել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը:

ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից ազատելու պայման է կատարված հանցագործության ոչ մեծ ծանրության լինելը: Այդ պայմանը չբավարարելու դեպքում համապատասխանաբար ազատում լինել չի կարող:

Եզրակացությունում ամփոփված են կատարված աշխատանքի արդյունքները, ձևակերպված են հիմնական հետևություններն ու առաջարկությունները, ուրվագծված են հետազոտվող հիմնախնդիրների հետագա մշակման հեռանկարները:

Ասեռախոսության հիմնական եզրահանգումներ

Կատարված ատենախոսական հետազոտության արդյունքում արվել են հետևյալ **եզրահանգումները**, որոնք կարող են օգտակար լինել ինչպես օրենսդրության զարգացման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համար:

1. Մարդկանց պետք է ոչ միայն հարկադրել կատարելու օրենքին համապատասխան, սահմանված գործողություններ, այլև խրախուսել դրանք կատարելու համար: Այդ է ցանկացած օրենսդրության ի կատար ածման մեխանիզմի էությունը, այդ թվում և քրեական: Ուստի քրեական իրավունքում քննության ենթակա են ոչ միայն պարսավման մեթոդները, այլև խրախուսման մեթոդները: Խրախուսումը գնահատական է, որը տալիս են այս կամ այն գործողությանը կոնկրետ մարդիկ, շրջապատողները, հասարակությունը: Խրախուսման միջոցով պետությունը հավանություն է տալիս այն գործողություններին, որոնք կատարվել են. իրավական խրախուսումը ներառում է երկու տարր. համապատասխան արարքի կամ վարքագծի սոցիալական հավանությունը և սոցիալապես նշանակալի գործողություններ կատարելու որոշակի իրադրությունում հայտնված անձանց սոցիալական խթանումը: Քրեական օրենսդրությունում խրախուսումն ունի տարբեր ձևեր, որոնք կախված են պետության ու հասարակության համար նշանակալի, լուծման կարոտ խնդիրների առանձնահատկություններից: Այդ ձևերից մեկը տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելն է:

2. Իրավական խթանումը օրենքի տեսք է ստանում: Դա ստեղծում է միանգամայն որոշակի երաշխիքներ, որոնք ուժեղացնում են խթանման արդյունավետությունը: Մարդը չի կասկածում, որ կստանա համապատասխան բարիք որոշակի արարք կատարելու դիմաց, եթե դա ամրագրված է օրենքի համապատասխան դրույթում: Երաշխիքներից գատ՝ իրավական խթանումն օժտված է այնպիսի հատկությամբ, ինչպիսին որոշակիությունն է: Օրենքի նորմում համապատասխան խթանի ամրագրումը

ցրում է համապատասխան անձանց կասկածներն առ այն, որ պահանջվող գործողությունները կատարելը կհանգեցնեն իրենց համար միանգամայն որոշակի բարիքներ ստանալուն:

3. Քրեական իրավունքում խրախուսումը միտված է արդարադատություն իրականացնելու, հանցագործությամբ խախտված արդարությունը վերականգնելու (այս կանոնից բացառություն է հանցագործություն կատարելուց ինքնական հրաժարվելը) համար պայմաններ ստեղծելուն: Այն ուղղված է անձի վարքագծին արդեն կատարված հանցագործությունից հետո: Դրա օրինակը տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելն է (<< քր.օր.-ի 73 հոդված): Այդպիսի հաշտեցումը սոցիալական արդարության վերականգնման ակտ է այն ծավալով, որով դա ձեռնառու է տուժողին:

Քրեաիրավական խրախուսման առանձնահատկությունը, ինչպես դա երևում է այն նորմերի վերլուծությունից, որոնցում դա ներառված է, այն է, որ տրամադրվող բարիքը առավելապես անձին որոշակի խստություններից ազատելն է: Քրեաիրավական խրախուսումը իրավական ներգործության բավականաչափ արդյունավետ մեթոդ է, որը կիրառվում է այն անձանց հանրօգուտ վարքագիծը խթանելու համար, որոնք հայտնվել են քրեական օրենքի գործողության տիրույթում:

4. Քրեաիրավական խրախուսման նորմը նորմատիվ-իրավական սահմանումների համակարգ է՝ ուղղված որոշակի դրական, հանրօգուտ վարքագծի խթանմանը: Ընդ որում, նշյալ նորմը պարունակում է ցուցում կիրառվող խթանի (բարիքի) վերաբերյալ, որն օգտագործվում է այն բանի համար, որ ապահովվի նշյալ վարքագիծը: Լինելով քառակազմ՝ նշյալ նորմի կառուցվածքը պարունակում է ոչ միայն դիսպոզիցիա, խրախուսում և սանկցիան, այլև հիպոթեզ: Հիպոթեզում նույնպես արտահայտվում է խրախուսում-նորմերի յուրահատկությունը: Մասնավորապես, << քր.օր.-ի 73-րդ հոդվածի հիպոթեզում նշված է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել խրախուսումը: Այսինքն՝ դա այն անձն է, որն առաջին անգամ է կատարել ոչ մեծ ծանրության հանցագործություն: Դա տվյալ դեպքում հիպոթեզ է, որը սահմանում է այն անձանց, որոնց նկատմամբ կարող է կիրառվել խրախուսումը:

5. Ներկայումս պատիժը չի դիտվում որպես միակ հնարավոր հետևանք՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին: Դրանով արտահայտվում է պետության ցանկությունը հրաժարվելու մեղավորների վրա ներգործության խիստ միջոցներից այն դեպքերում, երբ կարելի է առանց դրանց էլ բավականին արդյունավետորեն լուծել հարցերը: Նման մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ արդարադատության մեջ սոցիալական արդարությունը կարող է և չհանգել պատժի: Դրան կարելի է հասնել նաև առանց պատժի: Տուժողը սուբյեկտ է, որին պետք է ականջալուր լինել և որից մեծապես կախված է այն, թե ինչպես կիրականացվի արդարադատությունը: Տուժողն այն անձն է, հանուն որի էլ իրականացվում է արդարադատությունը, քանի որ ամենաշատը նա է զգում այն իրավունքների վերականգնման կարիքը, որոնք խախտվել են կատարված հանցագործությամբ: Վերականգնման հարացույցի իրականացման ձևերից մեկը ներկայումս հաշտարարությունն է (մեղիացիան), որը ենթադրում է լուծել վեճերն ու կոնֆ-

լիկտները հենց այդ վեճերի ու կոնֆլիկտների կողմերի ջանքերով արտադատարանական կարգով: Հաշտարարությունը ենթադրում է կիրառել հատուկ տեխնոլոգիաներ, որոնք բնավ ոչ միշտ են սահմանվում օրենսդրորեն, սակայն պետք է համապատասխանեն գործող օրենսդրության մեջ ամրագրված որոշակի պահանջներին: Հաշտարարությունը կարող է տարածվել բոլոր տեսակի վեճերի ու կոնֆլիկտների վրա, որոնք դատարանների ենթակայության ներքո են: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը հաճախ դիտվում է որպես հաշտարարության ձևերից մեկը: ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածը մեկնաբանելիս առանցքայինը «հաշտություն» հասկացությունն է: Հաշտվելը հիմք է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար: Այն հիմք է նաև քրեական հետապնդումից հրաժարվելու համար: Վերոնշյալ հասկացության այս երկու ասպեկտները թույլ են տալիս տեսնել, որ հաշտեցումը ոչ միայն փոխզիջման հասնելն է հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի և այդ հանցագործությունից տուժածի միջև, այլև տվյալ փոխզիջմանը հասնելու գործընթացը:

6. Հաշտեցումը հիմնված է կողմերի կամավորության վրա, որոնք ձգտում են հասնել դրան, և հանցանք գործած անձի նախաձեռնողականության վրա: Հանցագործություն կատարած անձի նախաձեռնողականությունը երաշխավորում է նրա ուղղվելը և հետագայում նոր հանցանքներ գործելուց զերծ մնալը: Դրա երաշխիքը նաև կամավորությունն է: Ընդ որում, կարևոր է այն, որ հաշտեցումը տուժողի և հանցանք գործած անձի միջև հաստատված հարաբերություններն են, որոնք բնութագրվում են փոխըմբռնմամբ և համագործակցության ձգտմամբ՝ ուղղված կատարված հանցագործության բացասական հետևանքները վերացնելուն: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածում հաշտեցման իրավահարաբերությունները հիմքը են, որոնց առկայությունը հնարավորություն է ընձեռում լուծելու հանցագործություն կատարելու մեջ մեղավոր համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը:

7. ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածի կիրառման հիմքերի թվում կենտրոնական տեղ է գրավում հաշտեցումը: Տվյալ նորմն ինքը ուշադրությունը բևեռում է դրա վրա, քանի որ անվանման մեջ օգտագործվում է «հաշտեցում» եզրույթը: Հաշտեցումը կատարված հանցագործությամբ ծագած կոնֆլիկտը լուծելն է հանցագործություն կատարած անձի և տուժողի միջև փոխզիջում գտնելու միջոցով: Ընդ որում, հաշտեցումը բնավ չի նշանակում անպայման պատճառած վնասի հատուցում կամ վնասի հարթում: Այո՛, իսկպես դեպքերի զգալի մասում հենց պատճառած վնասը հատուցելու կամ վնասը հարթելու միջոցով է ձեռք բերվում հաշտությունը, սակայն հաշտությունը կարող է կայանալ նաև առանց այդ գործողությունների: Ելնելով դրանից՝ հարկավոր չէ ներառել «պատճառած վնասի հատուցում» կամ «վնասի հարթում» հասկացությունները «հաշտեցում» հասկացության մեջ: Հաշտեցումը ընթացակարգ է և դրա շնորհիվ ձեռք բերվող արդյունք, որն իրավաբանական փաստ է, ինչը նկատի է առնվում քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս: Բավականին բարդ է խոսել գործողությունների համակարգի մասին, որոնք կարող են կիրառվել հաշտեցման ընթացակարգում, քանի որ դա մեծապես պայմանավորված է կատարված հանցագործության բնույթով ու առանձնահատկություններով, ինչպես նաև տուժողի անձով: Ուստի

հաշտեցման ընթացակարգը միշտ անհատական է: Այս առումով պետք է ճիշտ համարել այն, որ ո՛չ ՀՀ քր.օր.-ի 73 հոդվածում և ո՛չ էլ այլ տեղում չի տրվում գործողությունների ցանկը, որոնք կարող են և պետք է հանգեցնեն հաշտության: Սակայն հատուկ պետք է նշել այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի նշյալ ընթացակարգը՝ կամավորությունը, գիտակցվածությունը, փոխադարձությունը, թույլատրելիությունը, պարտադիրությունը:

8. ԱՊՀ երկրներից շատերի համար բնութագրական է այն, որ հանցանք գործելու մեջ մեղավոր անձի՝ հասարակության ակնկալած որոշակի վարքագիծը խրախուսող նորմերին բնորոշ է միասնական կառուցվածքը, որը ներառում է հիպոթեզը, դիսպոզիցիան, սանկցիան ու խրախուսումը: Բացի այդ, նշյալ նորմերը ձևակերպում են հանցանք գործելու մեջ մեղավոր անձի հանրագուտ վարքագծի համար անհրաժեշտ խթանը: Հետխորհրդային տարածքի պետությունների քրեական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիմնական միտումը տուժողի հետ հաշտեցման ինստիտուտը պահպանելն է:

Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող արտերկրյա օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրա հիմնական նշանակությունը հանցանք գործելու մեջ մեղավոր անձանց հանրագուտ վարքագիծը խթանելն է:

9. Հաշվի առնելով քրեական օրենսդրության հումանիզացման համաշխարհային միտումները, ինչպես նաև տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կանխարգելիչ ներուժը՝ հարց է բարձրացվել ընդլայնելու այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ այդ ինստիտուտը կարող է կիրառվել: Այսպես, անհրաժեշտ է համարվել կիրառել այն ոչ միայն ոչ մեծ ծանրության հանցանք գործած անձանց նկատմամբ, այլև միջին ծանրության հանցանք գործած անձանց նկատմամբ: Դա թույլ կտա ընդլայնել խրախուսման մեթոդի գործողության շրջանակը՝ որպես մեթոդի, որն ապացուցել է իր արդյունավետությունը կատարված հանցագործությունների հետևանքով ծագած կոնֆլիկտներ լուծելիս:

10. Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է նորմատիվ կերպով սահմանել տուժողի հետ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի հաշտեցման կարգը: Դա թույլ կտա խուսափել նշյալ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի հնարավոր խախտումներից՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ փոխզիջում գտնելու համար, ինչը կդառնա համապատասխան հանցագործության կատարումից հետո առաջացած կոնֆլիկտի արդարացի լուծում:

Կատարված ատենախոսական հետազոտությունը, անշուշտ, չի լուծել բոլոր խնդիրները՝ կապված տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման հետ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հեղինակի եզրակացությունները կարող են նպաստել նշյալ ինստիտուտը կիրառելու վերաբերյալ ՀՀ գործող քրեական օրենսդրության նորմերի կատարելագործմանը և այն ավելի արդյունավետ իրագործելուն:

Հետազոտվող հիմնախնդրի հետագա մշակման հեռանկարները կապված են

քրեական իրավունքի հումանիզացման գործընթացի իմաստավորումը շարունակելու և խրախուսման մեթոդը կիրառելու հետ՝ նպատակ ունենալով մատակարարել օրենսդիրին անհրաժեշտ տեսական հենքով, որն ունակ կլինի ապահովելու համակարգային մոտեցում քրեական պատասխանատվությունից ազատելու կարգին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի պատմական զարգացումը Հայաստանի քրեական օրենսդրությունում / Օրինականություն << դատախազության գիտագործնական հանդես N 110 , 2019, էջ 8-13:

2. Հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում / Օրինականություն << դատախազության գիտագործնական հանդես N 111 , 2019, էջ 32-39/

3. Տուժողի հետ հաշտեցման քրեաիրավական բնույթը/ Օրինականություն << դատախազության գիտագործնական հանդես N 112 , 2019, էջ 21-29

4. Տուժողի հետ հաշտվելը որպես քրեական պատասխանատվության հիմք/ Պետություն և Իրավունք N 2-3 /84-85/, 2019 էջ 38-44

5. Տուժողի հետ հաշտվելը, որպես քրեաիրավական վեճերի լուծման եղանակ / Բանբեր N 2/ 29/, 2019, էջ 54-69/

6. Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները/ Օրինականություն << դատախազության գիտագործնական հանդես N 117 , 2020, էջ 3-8

7. Հաշտեցման իստիտուտը արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում/ Օրինականություն << դատախազության գիտագործնական հանդես N 118 , 2020, էջ 5-11/

8. Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները / << գիտությունների>>հանդեսի գլխավոր խմբագիր Պ.Ավետիսյանի կողմից 22.05.2020թ. տրվել է տեղեկանք, այն մասին , որ հոդվածը կտպագրվի հանդեսի հերթական համարներից մեկում:

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ
ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ (НА ОСНОВАНИИ
ПРИМИРЕНИЯ С ПОТЕРПЕВШИМ)**

РЕЗЮМЕ

В данном диссертационном исследовании автором обстоятельно изучаются теоретические и практические проблемы освобождения от уголовной ответственности (на основании примирения с потерпевшим).

Актуальность темы диссертационного исследования обусловлена эффективной защитой прав индивида в уголовно-правовом отношении.

Идея о том, что лицо, совершившее преступление, должно осознавать свою вину, раскаяться в ней и полностью возместить причиненный им ущерб, становится доминирующей. Иными словами, добровольное возмещение ущерба, причиненного преступлением, необходимо заменить принудительным воздействием. Один из таких способов - оправдать преступника в связи с примирением с потерпевшим.

В работе обосновывается концептуальный подход о том, что правовые стимулы включают два элемента: социальное одобрение соответствующего действия или поведения; социальный стимул тех, кто в данной ситуации выразил готовность предпринять социально значимые действия.

Научная новизна диссертации состоит в том, что автором выявлены проблемные аспекты освобождения от уголовной ответственности на основании примирения с потерпевшим.

По мнению автора, одним из важнейших элементов правового поощрения является правовое стимулирование, как своего рода влияние на человека, которое дает ему возможность выбрать одно из возможных действий, когда этот человек, скорее всего, выберет действия, одобренные государством, чтобы дать в этом случае немного пользы.

Институт примирения в уголовном праве полностью соответствует современным требованиям общества к уголовному правосудию. Он соответствует таким принципам, как гуманность, равенство сторон и т. д., которые составляют современное уголовное правосудие. Это также соответствует идеям примирения, реализация которых - будущее системы правосудия. В связи с этим необходимо дальнейшее развитие института примирения, для чего необходимо его глубокое понимание, определение его места среди других институтов уголовного права.

Вполне возможно, что есть необходимость в расширении деятельности этого института.

Автор считает, что характер оправдательного приговора в связи с примирением с потерпевшим заключается в том, что можно достичь целей приговора без применения этих наказаний. При этом государство получает не только желаемый результат правосудия, но и значительную экономическую выгоду, суть которой заключается в экономии средств, которые в противном случае были бы направлены на исполнение приговора.

Примечательно утверждение автора о том, что среди оснований для применения статьи 73 УК РФ ключевое место занимает примирение. Сама эта норма обращает на себя внимание, так как в названии используется термин «примирение». Примирение - это урегулирование спора о преступлении путем нахождения компромисса между «жертвой» и преступником. Более того, примирение не означает компенсации или возмещения причиненного ущерба. Действительно, по большей части примирение достигается путем возмещения ущерба или возмещения причиненного ущерба, но примирение может быть достигнуто и без этих действий. Следовательно, нет необходимости включать понятия возмещения и возмещения ущерба в понятие "примирение". Примирение - процедура, результатом которой является юридический факт, учитываемый при решении вопроса об оправдании.

Теоретико-доктринальной основой диссертации являются научные труды известных в отечественной и зарубежной науке уголовного права. В качестве фактологического базиса диссертации использованы материалы судебной практики.

Практическая значимость диссертационной работы заключается в том, что содержащиеся в нем рекомендации и выводы могут найти практическое применение в правоохранительной деятельности.

Материалы диссертационного исследования могут быть использованы сотрудниками уголовной юстиции, а также в учебном процессе по дисциплине уголовного права.

ASHRAFYAN NELLI ARMEN

**THEORETICAL RELEASE FROM CRIMINAL RESPONSIBILITY
AND PRACTICAL PROBLEMS (PLAINTIFF:
BASED ON RECONCILIATION)**

SUMMARY

Criminal law, despite its historically determined punitive nature, must also meet the requirements of the principle of humanity. This is the main reason for its development in many countries around the world. To that end, forms of influence are being searched that do not contain or minimally infringe on elements of human rights and freedoms, even if those people have committed crimes. The idea that the person who committed the crime must realize his guilt, repent for it and fully compensate the damage caused by him becomes dominant. In other words, voluntary compensation for the damage caused by the crime must be replaced by coercive influence. One such way is to acquit a criminal in connection with reconciliation with the victim.

The author believes that legal incentives include two elements: the social endorsement of the relevant act or behavior; the social incentive of those who, in a given situation, have expressed a willingness to take socially significant action.

In criminal law, encouragement has different forms, which depend on issues that are significant for the society and the state, to be solved. One of such forms is release from criminal liability.

According to the author, one of the most important elements of legal encouragement is legal incentive, as a kind of influence on a person, which puts him in a position to choose one of the possible actions, when that person will most likely choose actions that are approved by the state. to provide some good in that case.

The institution of reconciliation in criminal law is fully in line with the current requirements of the society for criminal justice. It conforms to principles such as humanity, equality of arms, etc., which constitute modern criminal justice. It also corresponds to the ideas of conciliation, the implementation of which is the future of the justice system. In this regard, it is necessary to further develop the institution of reconciliation, for which it is necessary to understand it in depth, to determine its place among other institutions of criminal law. It is quite possible that there is a need to expand the operation of this institution.

The author believes that the nature of acquittal in connection with reconciliation with the victim is that it is possible to achieve the goals of the sentence without applying those punishments. At the same time, the state obtains not only the desired result of

justice, but also a significant economic benefit, the essence of which is that the means are saved that would otherwise have been directed to the execution of the sentence.

The author's assertion that reconciliation occupies a key place among the grounds for applying Article 73 of the RA Criminal Code is noteworthy. This norm focuses on itself, as the term "reconciliation" is used in the name. Reconciliation is the settlement of a dispute arising out of a crime by finding a compromise between the "victim" of the criminal. Moreover, reconciliation does not mean compensation or compensation for the damage caused. Indeed, for the most part, reconciliation is achieved through reparation or reparation for the damage caused, but reconciliation can be achieved without these actions. Therefore, there is no need to include the notion of reparation and reparation in the notion of "reconciliation". Conciliation is a procedure, the result of which is a legal fact, taken into account when resolving the issue of acquittal.